ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/51

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Բողոք բերող՝ «Էլմարկետ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչներ՝ Գ. Գալստյանի, Ա. Բադալյանի, Դ. Գրիգորյանի,
«Էլմարկետ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Սիմոնյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, համակարգիչների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Էլմարկետ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 08.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել՝ վերացնել «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.03.2022 թվականի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Հայտը մերժելու» մասին կայացված որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 05.04.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի 07.04.2022թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/6077-2022 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 08.04.2022թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

11.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/51 համարի ծածկագիրը:

15.04.2022թ.-ին, 28.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 28.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. «Էլմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էլմարկետ» ՍՊԸ-ն 08.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Էլմարկետ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով մասնակցել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» էլեկտրոնային աճուրդին:

Վերը նշված աճուրդին մասնացելիս Ընկերության կողմից պահպանվել են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր ընթացակարգերը և պայմանները:

Մեզ համար բավականին անհասկանալի և կասկածելի պայմաններում «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու

ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից 31.03.2022 թվականի թիվ 4 արձանագրությամբ Ընկերության հայտը գնահատվել է անբավարա և մերժվել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Նույն օրենսգրքի 346-րդ հոդվածի, 2-րդ կետի համաձայն՝ եթե կողմերից յուրաքանչյուրը պայմանագրով պարտականություն է կրում հօգուտ մյուս կողմի, ապա նա մյուս կողմի պարտապանն է այն բանում, ինչը պարտավոր է անել հօգուտ նրա և միաժամանակ նրա պարտատերն է այն բանով, ինչն իրավունք ունի նրանից պահանջել:

Նույն օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Տվյալ դեպքում Հանձնաժողովի գործողությունները չեն բխել ՀՀ գործող օրենդրության իրավակարգավորումներից, ինչն առարկայանում է ներքոգրյալ պատճառաբանություններով.

Այսպես, Հանձնաժողովը պատճառաբանել է, որ «...ապրանքի տեխնիկական բնութագրի տեխնիկականկ ցուցիչների համեմատումը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված ցուցանիշների հետ գնահատող հանձնաժողովի կողմից հնարավոր չի իրականացնել, քանի որ առաջարկված «Touch Pie LP22-i3» մակնիշի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն տեղեկատվական առկա բազաներում և շուկայում առկա չէ»:

Հանձնաժողովի կողմից ներկայացված պատճառաբանությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ առաջարկվող մակնիշի վերաբերյալ տեղեկատվությունը առկա է հետևյալ հղումով՝ https://eldorado.am/am/touchpie-lp22-i3.html և www.touchpie.cn:

Խնդրի առարկայի մասին մեր մոտեցումը ներկայացրել ենք հանձնաժողովի անդամներին, ինչի վերաբերյալ չունենք հստակ դիրքորոշում, որպեսզի հետագայում մենք կարողանանք իրականացնել և հասկանալ մեր հետագա գործողությունները:

Այլ կերպ ասած գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է այն իրողությունը, որ առկա են եղել ապրանքի տեխնիկական բոլոր ցուցիչները՝ տեղեկատվական առկա բազաներում, ուստի անհասկանալի է Հանձնաժողովի նման մոտեցումը:

Ավելին, մենք կարծում ենք, որ սա Հանձնաժողովի կողմից մտացածին մոտեցում է եղել, որպեսզի կարողանա մերժել Ընկերության հայտը (ճանապարհ բացելով մեկ այլ ցանկալի ընկերության համար), քանի որ առկա չէ որևէ օրենսդրական իրավակարգավորում Ընկերության կողմից տեղեկատվական բազաների, այսպես կոչված էլեկտրոնային հարթակի ապահովման ձևաչափով:

Հանձնաժողովը միակ պատճառ նշել է, որ նշված մակնիշի վերաբերյալ չկա տեղեկատվություն տեղեկատվական առկա բազաներում: Սակայն արձանագրության մեջ օրենքի որևէ հիմնավորված հղում չկա, որում նշվում է, որ առաջարկվող մակնիշը պարտադիր պետք է արտացոլվի տեղեկատվական բազաներում: Քանի որ ՀՀ օրենսդրությամբ նման պահանջ չկա, ուստի անհասկանալի է հանձնաժողովի դիրքորոշումը:

Նշեմ որ, «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքը արտադրվում է մի գործարանում, որն աշխատում է միայն մեծաքանակ ու անհատական պատվերների հիման վրա և հատավաճառով չի զբաղվում: Այդ իսկ պատճառով հնարավոր է, որ ամբողջ ապրանքացանկը չգտնվի որոնողական համակարգերում: Այնուհանդերձ առաջարկվող մոդելի մասին տեղեկատվություն կարող եք տեսնել հետևյալ հղումով՝ https://eldorado.am/am/touchpie-lp22-i3.html և www.touchpie.cn:

Ոչինչ չէր խանգարում Հանձնաժողովին առանց շտապելու առավել խորը ուսումնասիրել և գտնել առաջարկվող մոդելի մասին տեղեկատվություն՝ հետևյալ հղումով՝ https://eldorado.am/am/touchpie-lp22-i3.html և www.touchpie.cn, իսկ թե ինչու Հանձնաժողովը նման բաց թողում է կատարել դա արդեն այլ պատկան մարմինների քննարկման առարկան կդառնա:

Կից ներկայացնում եմ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005 ծածկագրի շրջանակներում հրապարակված բոլոր արձանագրությունները, որտեղ երևում է , որ ԷԼՄԱՐԿԵՏ ՍՊԸ-ն պատշաճ կարգով և ժամանակին կատարել է իր շտկումները և ներկայացված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ 1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

2. Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

3. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

4. Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կամ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդը անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Խորհրդի անդամները բողոքներն ուսումնասիրում են պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Խորհրդի անդամները սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ են գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր են բացառապես ղեկավարվել օրենքով և կիրառել այն:»:

Վերոգրյալի հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձն խնդրել է դադարեցնել՝ վերացնել «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.03.2022 թվականի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Հայտը մերժելու» մասին կայացված որոշումը:

Ի լրումն ներկայացված բողոքի, Ընկերություն 26.04.2022թ.-ին ներկայացված լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ի կատարումն Ձեր 15.04.2022 թվականի ԳԲՔԱ-ԼՕ-2022/51 գործով ներկայացվածին, սույնով ներկայացնում ենք արտադրողի կողմից ներկայացված փաստթղթերի անգլերեն օրինակը և դրա թարգմանությունը, որով հավաստվում է արտադրողի մոտ ապրանքի առկայության հանգամանքը համապատասխան չափորոշիչներին և որը էլմարկետ ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» ծածկագյուղ գնման ընթացակարգի ժամանակ:

Միաժամանակ մեր կողմից ներկայացված բողոքի խնդրամասում ավելացնում ենք ներքոգրյալը և խնդրում ենք ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին պատվիրատուի 31.03.2022թ-ի որոշումը դադարեցնել և էլմարկետ ՍՊԸ ընկերությունը ճանաչել որպես հաղթող մասնակից:»:

Ներկայացված լրացմամբ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է նաև ընթացակարգը չկայացած հայտատարարելու մասին պատվիրատուի 31.03.2022թ.-ի որոշումը դադարեցնել և «Էլմարկետ» ՍՊԸ-ին ճանաչել որպես հաղթող մասնակից:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6236-2021 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից 08.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 14.04.2022թ.-ին թիվ 1/18-4/25790-2022 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի ապրիլի 4-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/51 ծածկագրով բողոքը, կից ներկայացնում եմ «ՊԵԿ-

ԷԱՃԱՊՁԲ-22/005» ծածկագրով գնման ընթացակարգի անհրաժեշտ փաստաթղթերը և գրավոր դիրքորոշումը:

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված LP22-I3 մոդելը առկա չէ արտադրողի պաշտոնական կայքէջում (www.touchpie.cn), ուստի գնահատող հանձնաշողովի կողմից անհնար էր գնահատել առաջարկվող ապրանքի մոդելի և պարամետրերի համապատասխանությունը հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Փոխարենը հայտի մերժման որոշումից հետո www.touchpie.cn կայքում հայտնվել է LP22 ոչ ամբողջական անվանումով համակարգիչ, որը նախկինում չկար (կից ներկայացնում եմ օրեր առաջ մեր կողմից կայքի ուսումնասիրության լուսապատճեններ): Ինչ վերաբերում է https://eldorado.am կայքին, ապա այն չի հանդիսանում արտադրողի կայք, այլ խանութի կայք է, որը ծրագրավորվում է խանութի աշխատակցի կամ պատվիրատուի կողմից, և որտեղ հնարավոր է ներկայացնել ցանկացած տեսակի ապրանք, ուստի այն չի դիտարկվել գնահատող հանձնաժողովի կողմից:

ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ապրանքների ուսումնասիրության համար դիտարկել է միմիայն պաշտոնական աղբյուրները, հակառակ դեպքում հրավերով նախատեսված մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման պահանջը կկրեր ձևական բնույթ:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/51 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից համակարգիչների ձեռքբերման նպատակով 04.03.2022թ.-ին հայտարարվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրի համաձայն՝ սահմանվել է հետևյալը. «Համակարգիչ ամբողջը մեկում, Պրոցեսորը՝ առնվազն 2.1 GHz հաճախականությամբ (2.1 GHz base frequency, Up to 4.1 GHz max. turbo frequency with Intel® Turbo Boost), Turbo Frequency - առնվազն 4.1 GHz, Intel Core i3 կամ ամարժեք, առնվազն 10-րդ սերնդի, նվազագույնը 2/4 միջուկ (2 cores, 4 threads), առնվազն 4MB քեշ հիշողություն: Օպերատիվ հիշողություն՝ առնվազն 8GB DDR4-2666, նվազագույնը 1 հատ ազատ SoDIMM սլոթի հնարավորությամբ: Նվազագույնը 256 GB ծավալով M.2 2280 PCIe NVMe SSD. Գրաֆիկական քարտ՝ ներկառուցված Բարձրախոս՝ ներկառուցված Էկրան՝ նվազագույնը 21.5" անկյունագծով, FHD, anti-glare display. Տեսախցիկ՝ ներկառուցված տեսախցիկ առնվազն 5MP, ներկառուցված խոսափողներով - մինչև 30 frames/sec, dual array microphone included. Ներկառուցված ցանցային բնիկ՝ առնվազն 1 հատ RJ-45 (network) jack - Gigabit Ethernet աջակցմամբ (Gigabit Ethernet support). Անհրաժեշտ պորտեր՝ առնվազն 4 հատ USB պորտ, 1 x combo jack բարձրախոսի և խոսափողի համար (for headphones and microphone), առնվազն 1 HDMI պորտ. (2x Type-A Hi-Speed USB 480Mbps signaling rate ports; 2x Type-A SuperSpeed USB 5Gbps signaling rate ports, 1x HDMI 1.4, 1xMicrophone/Headphone Combo Jack). WLAN: Realtek RTL8822CE Wi-Fi 51 (802.11ac) 2x2 with Bluetooth® M.2. Անվտանգություն՝ Trusted Platform Module (TPM) 2.0 (firmware) Առնվազն 1 հատ USB մկնիկ և USB ստեղնաշար Երաշխիք՝ առնվազն 3 տարի: Այլ պայմաններ: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, փաթեթավորմամբ: Ապրանքների տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Հրավերով պահանջվող ապրանքների համար մասնակիցը պետք է ներկայացնի արտադրողի լիազորագիր (MAF) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF): Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի օգտագործումը պարունակում է նաև «կամ համարժեք» բառերը:»:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էլմարկետ» ՍՊԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված չէ առաջարկվող համակարգչի պրոցեսորի մոդելը, ուստի հնարավոր չէ պարզել նրա համարժեքությունը «Intel Core i3»-ի հետ: Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվում է, որ համակարգիչն պետք է ունենա 802.11ac 2x2 with Bluetooth M.2 տեխնիկական ցուցանիշը, սակայն մասնակցի կողմից հայտով առաջարկվել է 802.11b/g/n 2x2 with Bluetooth 4.2 տեխնիկական ցուցանիշը, որը չի համաաlատասխանում հրավերի պահանջներին: Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է 6 հատ USB պորտ (1 X combo jack բարձրախոսի և խոսափողի համար (for headphones and microphone), 1 HDMI պորտ. (2x Type-A Hi-Speed USB 480Mbps signaling rate ports; 2x Type-A SuperSpeed USB 5Gbps signaling rate ports, lx HDMI 1.4, lxMicrophone/Headphone Combo Jack): Հարկավոր է հստակեցնել առաջարկվող ապրանքի մեջ տեղադրված պորտերի քանակները և տեսակները: Հստակ չի ներկայացված առաջարկվող ապրանքի մակնիշը, մասնավորապես՝ անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի մակնիշը, իր նույնականացման դասիչով, որպեսզի հնարավոր լինի առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրով նախատեսված տեխնիկական ցուցանիշները համեմատել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի հետ: Մասնակցի կողմից մրցույթին մասնակցելու հայտով չի ներկայացվել հայտի ապւսհովման երաշխիքի պատճենը, սակայն աճուրդն ամփոփվելու օրը մասնակիցը հայտի ապահովման երաշխիքի բնօրինակը ներկայացրել է պատշաճ կարգով:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գմահատման նիստը և ծանուցել Մասնակցին, առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի 31.03.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերում, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է հետևյալ անհամապատասխա-նությունը,

«Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո) նշված ապրանքային մակնիշով ապրանքի տեխնիկական բնութագրի տեխնիկական ցուցանիշների համեմատումը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված ցուցանիշների հետ գնահատող հանձնաժողովի կողմից հնարավոր չի իրականացնել, քանի որ առաջարկված «Touch Pie LP22-I3» կամ «Touch Pie LP22-I3» մակնիշի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն տեղեկատվական առկա բազաներում և շուկայում առկա չէ (անգամ Guangzhou Touch-pie Electronic Technology Co., Ltd. Ընկերության կողմից կիրառվող www.touchpie.cn պաշտոնական կայքում): Այսինքն՝ գնահատող հանձնաժողովի 24.03.2022թ-ի թիվ 2 արձանագրության 3-րդ մասի 4-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ հստակ չի ներկայացված առաջարկվող ապրանքի մակնիշը, մասնավորապես՝ անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի մակնիշը, իր նույնականացման դասիչով, որպեսզի հնարավոր լինի առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրով նախատեսված տեխնիկական ցուցանիշները համեմատել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի հետ, մասնակցի կողմից ամբողջությամբ չի շտկվել:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 42-րդ կետի պահանջները, որոշել է «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

viii. «Գուանչժոուի Touch-pie Electronic Technology» ՍՊԸ-ի կողմից 16.04.2022թ.-ին տրված գրության համաձայն՝ «սույն ծանուցմամբ ցանկանում եմ տեղեկացնել Ձեզ, որ All in One PC Touchpie LP22-I3 արդեն գոյություն ունի, և առկա է մեր պահեստում: Այս մոդելը պատրաստված է «Էլմարկետ» ՍՊԸ-ի հատուկ հետազոտության համար, Երևան, Հայաստան: Ստորև ներկայացված է AIO Touchpie LP22-I3-ի ամբողջական բնութագիրը»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Էլմարկետ» ՍՊԸ-ի

կողմից 08.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու

հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը

կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Համակարգիչների ձեռքբերման նպատակով 04.03.2022թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից համակարգիչների ձեռքբերման նպատակով 04.03.2022թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էլմարկետ» ՍՊԸ-ն: Հանձնաժողովի 24.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրվել են անհամապատասխանություններ, ինչի արդյունքում Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ

աշխատանքային օրով կասեցնել հայտերի գմահատման նիստը և ծանուցել Մասնակցին, առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի 31.03.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերում, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը,

«Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո) նշված ապրանքային մակնիշով ապրանքի տեխնիկական բնութագրի տեխնիկական ցուցանիշների համեմատումը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված ցուցանիշների հետ գնահատող հանձնաժողովի կողմից հնարավոր չի իրականացնել, քանի որ առաջարկված «Touch Pie LP22-I3» կամ «Touch Pie LP22-I3» մակնիշի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն տեղեկատվական առկա բազաներում և շուկայում առկա չէ (անգամ Guangzhou Touch-pie Electronic Technology Co., Ltd. Ընկերության կողմից կիրառվող www.touchpie.cn պաշտոնական կայքում): Այսինքն՝ գնահատող հանձնաժողովի 24.03.2022թ-ի թիվ 2 արձանագրության 3-րդ մասի 4-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ հստակ չի ներկայացված առաջարկվող ապրանքի մակնիշը, մասնավորապես՝ անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի մակնիշը, իր նույնականացման դասիչով, որպեսզի հնարավոր լինի առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրով նախատեսված տեխնիկական ցուցանիշները համեմատել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի հետ, մասնակցի կողմից ամբողջությամբ չի շտկվել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Գուանչժոուի Touch-pie Electronic Technology» ՍՊԸ-ի կողմից 16.04.2022թ.-ին տրված գրության համաձայն՝ «սույն ծանուցմամբ ցանկանում եմ տեղեկացնել Ձեզ, որ All in One PC Touchpie LP22-I3 արդեն գոյություն ունի, և առկա է մեր պահեստում: Այս մոդելը պատրաստված է «Էլմարկետ» ՍՊԸ-ի հատուկ հետազոտության համար, Երևան, Հայաստան: Ստորև ներկայացված է AIO Touchpie LP22-I3-ի ամբողջական բնութագիրը»:

Բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիրը, այն համադրելով «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի հետ, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից կայացված թիվ 4 արձանագրությունն ու «Գուանչժոուի Touch-pie Electronic

Technology» ՍՊԸ-ի կողմից 16.04.2022թ.-ին տրված գրությունը՝ արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ դրանում առկա չափորոշիչները համապատասխանում են Ընթացակարգի հրավերով պահանջվող պահանջներին: Այլ կերպ ասած՝ «Գուանչժոուի Touch-pie Electronic Technology» ՍՊԸ-ի կողմից 16.04.2022թ.-ին տրված գրությամբ հերքվում են Հանձնաժողովի 31.03.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրված «անհամապատասխանությունները». Մասնավորապես այն, որ՝ *«... առաջարկված «Touch Pie LP22-I3» կամ «Touch Pie LP22-I3» մակնիշի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն տեղեկատվական առկա բազաներում և շուկայում առկա չէ (անգամ Guangzhou Touch-pie Electronic Technology Co., Ltd. Ընկերության կողմից կիրառվող www.touchpie.cn պաշտոնական կայքում)...»:*

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ թիվ «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Էլմարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը կայացվել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջների խախտումներով՝ որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ուստի, նման պայմաններում «Էլմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից 08.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/51 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

1. Պարտավորեցնել «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

- դադարեցնել 31.03.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու, մերժելու և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումները:

- ընդունել «Էլմարկետ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**